

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

25.01.2019թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դավթյանը,
Լ.Պետրոսյանը, Ն.Բաղդասարյանը
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ՎԿ գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը,
ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը,
ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը,
ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Մարկոսյանը,
ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կոյունջյանը,
ՀՀ ՎԿ մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2017 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնին՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին իրականացված տնային տնտեսությունների

կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան, գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհապական/

2. ««Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները 20__թ. բերքի տակ (հունիսի 1-ի դրությամբ)» Ձև 4-ԳՏ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 36-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու», ««Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները 20 թ. բերքի տակ (հունիսի 1-ի դրությամբ)» Ձև 4-ԳՏ< (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 35-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու» և ««Ձկնորսության և ձկնաբուծության մասին» Ձև 1-ՁՈՒԿ (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 47-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Ավագյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:

/Նորմատիվ/

Լսեցին՝

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Ղազախստանի Ալմաթի քաղաքում 2018 թվականի դեկտեմբերի 3-ից 13-ը ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից կազմակերպված «CSPro անդրոիդ-մոբայլ տվյալների հավաքագրում» վերապատրաստման դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ռ. Հովհաննիսյան/

3.2. Հաղորդում՝ Թունիսի Թունիս քաղաքում 2018 թվականի դեկտեմբերի 18-ին Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից կազմակերպված «Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) միգրացիային առնչվող առաջնահերթությունները՝ Թունիսի ազգային զարգացման ռազմավարությունում» խորագրով աշխատաժողովին մասնակցելու և Հայաստանի փորձը ներկայացնելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կոյունջյան/

3.3. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2018 թվականի դեկտեմբերի 19-ից 21-ը ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված՝ «Արդյունաբերության վիճակագրության կատարելագործում և արդյունաբերական ցուցանիշների բարելավում ԱՊՀ երկրներում քաղաքականության վերլուծությունների համար» խորագրով տարածաշրջանային ծրագրի շրջանակում բարձր մակարդակի խորհրդատվական հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Գ.Անանյան, Ա. Հայրապետյան/

3.4. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2018 թվականի դեկտեմբերի 20-ին «Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների աշխատանքային հանդիպմանը» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս. Մնացականյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

19.02.2019թ. նիստին

Մասնակցում էին՝

- ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
- ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն. Բաղդասարյանը, Վ.Դավթյանը, Լ.Պետրոսյանը,
- ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

- ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
- ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ա. Վարդանյանը,
- ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը,
- ՀՀ ՎԿ տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ.Թորոսյանը,
- ՀՀ ՎԿ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ.Արևշատյանը,
- ՀՀ ՎԿ գների վիճակագրության և միջազգային համադրումներ բաժնի պետ Մ.Երիցյանը,
- ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա.Գրիգորյանը,
- ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Լ.Բեյբոյանը,
- ՀՀ ՎԿ արհեստակցական կազմակերպության նախագահ Մ.Պետրոսյանը,

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. ««Մետրոպոլիտենի, ճոպանուղու և տրոլեյբուսային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև 1-էլեկտրո (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին», ««Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և դրանց կառույցների մասին» Ձև 1-ճան (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի

աշխատանքի մասին» Ձև 2-երկաթ (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի փետրվարի 13-ի թիվ 03-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Հեռագրական կապի և հեռախոսային ցանցի ծառայությունների մասին» Ձև 11-կապ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի օգոստոսի 4-ի թիվ 34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Հեռագրական կապի մասին» Ձև 31-կապ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի ապրիլի 7-ի թիվ 11-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Հեռախոսային կապի միջոցների և աշխատանքի որակի մասին» Ձև 42-կապ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի ապրիլի 7-ի թիվ 14-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» և ««Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի արտադրանքի մասին» Ձև 65-երկաթ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հուլիսի 11-ի թիվ 09-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Թորոսյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:

/Նորմատիվ/

2. «ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2019 թվականի համար հավաքման ենթակա մի շարք վիճակագրական հաշվետվությունների հավաքման պարբերականությունների/դադարեցման՝ ըստ ռեսպոնդենտների միջին ամսական շրջանառությունների ծավալների շեմերի հաստատման մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Արևշատյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումն ըստ ներկայացված նախագծի:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը հաստատելու և 2018 թվականի դեկտեմբեր ամիսը որպես բազիսային ժամանակաշրջան սահմանելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Մ.Երիցյան/

Որոշեցին՝

հաստատել 2019 թվականի Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը՝ համաձայն հավելվածի,

Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար որպես բազիսային ժամանակահատված սահմանել 2018 թվականի դեկտեմբեր ամիսը:

/Անհատական/

4. ««Գրքերի, բրոշյուրների հրատարակության մասին» Ձև 1-հրատարակություն (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 187-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Թերթերի և այլ պարբերականների հրատարակման մասին» Ձև 1-մամուլ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 188-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Երաժշտական, գեղարվեստի, արվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների մասին» Ձև 1-եզադ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 186-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների մասին» Ձև 2-գմ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 189-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների մասին» Ձև 2-գմ-1 (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 190-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Բարձրագույն մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների մասին» Ձև 3-գմ (տարեկան) վիճակագրական

հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 191-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Բարձրագույն մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատությունների մասին» Ձև 3-գմ-1 (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 192-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» և ««Հաշվետվություն քաղաքային հողերի և կանաչապատ տարածքների մասին» Ձև թիվ 1-կանաչ պետական վիճակագրական հաշվետվության ձևն և լրացման հրահանգը հաստատելու մասին» և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի թիվ 180-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Գրիգորյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:

/Նորմատիվ/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2019 թվականի հունվարի 22-ից 23-ը ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) Մոլդովայի ներկայացուցչության կողմից կազմակերպված՝ «Սերունդների և գենդերային ծրագրի 2020 շրջափուլը խորագրով» տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կուլումջյան/

5.2. Հաղորդում՝ Չինաստանի Շանհայ քաղաքում 2019 թվականի հունվարի 23-ից 24-ը ՄԱԿ-ի ուսումնական և հետազոտական ինստիտուտի (UNITAR), ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտի (UN DESA), ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի Տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UN ESCAP) և Շանհայի սոցիալական գիտությունների ակադեմիայի (SASS) կողմից կազմակերպված «Գլոբալ նպատակները Կայուն Ջարգացման համար 2030թ. օրակարգի իրականացման համար Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում» խորագրով ուսումնական կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Սաֆյան/

5.3. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2019 թվականի հունվարի 28-ից փետրվարի 2-ը «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի» 6-րդ խմբագրության հիմնական առանձնահատկություններին ծանոթանալու և քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Քեյբույան/

5.4. Հաղորդում՝ Իսրայելի Թել-Ավիվ քաղաքում 2019 թվականի փետրվարի 3-ից 7-ը «Իսրայելի պետական աշխատողների արհմիության համագումարին և հարակից միջոցառումներին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Մ.Պեպրոսյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

27.02.2019թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԻՆ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԻՆ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն. Բաղդասարյանը,
Վ.Դավթյանը, Լ.Պետրոսյանը,
ՀՀ ՎՊԻՆ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ա. Վարդանյանը,
ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը,
ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Մարկոսյանը,
ՀՀ ՎԿ «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» ծրագրի ավագ տնտեսագետ,
աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Մ. Պետրոսյանը,
ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի վիճակագիր Ա.
Հակոբյանը

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1.«2018 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշեցին՝

հաստատել «2018 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը»՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

2.«Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2017 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան: Տվյալները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:

/Անհատական/

3.«Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2015-2017 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2015-2017 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները: Տվյալները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:

/Անհատական/

Լսեցին՝

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2019 թվականի փետրվարի 12-ից 13-ը EU4ENERGY ծրագրի շրջանակներում Միջազգային էներգետիկ գործակալության (IEA) կողմից կազմակերպված «Շինություններում էներգիայի արդյունավետության» վերաբերյալ քաղաքական ֆորումին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Մ. Պեպրոսյան, Ա. Հակոբյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղուման հաշվետվության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն

/Անհատական/